

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՎԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ և ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Ընդհանուր դրույթներ

- Բոլորնիայի գործընթացին ինտեգրումը ենթադրում է տարբերակված աստիճաններով (բակալավրիատ, մագիստրատուրա, հետբուհական գիտակրթական) բարձրագույն կրթական համակարգ՝ նրա յուրաքանչյուր փուլում ավելի ճկուն, դասախոսի և ուսանողի ակադեմիական ազատություններին նպաստող ուսումնական գործընթացների կիրառմամբ: Մասնավորապես, ուսանողը հնարավորություն է ստանում ակտիվորեն մասնակցելու իր անհատական ուսումնական պլանի կազմմանը և հետևաբար, իր՝ որպես մասնագետի, կայացմանը, իսկ դասախոսը՝ ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ:
 - Ուսումնական գործընթացում բարեփոխումների իրականացման համար կարևորվում է ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգերի ներդրումը, որը ենթադրում է մի շարք փոփոխություններ ուսումնական գործընթացի կազմակերպման գործում՝ էապես նպաստելով ուսանողների ակադեմիական ազատությանը:
- 1.Սույն կանոնակարգը հիմնվում է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2005թ. թիվ 2307-Ն «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշման, ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. հունիսի 9-ի թիվ 588-Ա/Ք հրամանով հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ»-ի, «Ուսումնական ծրագրերի (պլանների) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույց»-ի և ՀՀ ԿԳՆ հրահանգչական նամակների վրա:
- 2.Կանոնակարգի դրույթները գործողության մեջ են դրվում գիտխորհրդում հաստատման օրից և նույն ժամանակից ուժը կորցրած են ճանաչվում «ՎՊՄԻ-ի ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների կազմակերպման, գնահատման և հաշվառման կանոնակարգ»-ը՝ ընդունված ՎՊՄԻ գիտխորհրդում 29.10.2007թ և «ՎՊՄԻ-ում ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույց»-ը՝ ընդունված ՎՊՄԻ գիտխորհրդում 07.03.2008թ.:

1. Հիմնական հասկացությունները

- 1.1. **Բակալավրիատը** բարձրագույն կրթության առաջին աստիճանն է, որը ներառում է 3-4 լրիվ ուսումնական տարիների ավարտում դասընթացներ: ՎՊՄԻ-ում բակալավրիատի տևողությունը 4 ուսումնական տարի է:
- 1.2. **Մագիստրատուրան** բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանն է, որի տևողությունը 1-2 տարի է (ՎՊՄԻ-ում՝ 2 տարի):
- 1.3. **Ուսումնական տարին** ուսանողի 40 շաբաթյա բոլոր տեսակի ուսումնական արդյունավետ աշխատանքների ժամանակն է, որից առնվազն 32 շաբաթը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին և իրականացվում է երկու կիսամյակներով՝ աշնանային և գարնանային:

- 1.4. **Հմտությունը** կոնկրետ առաջադրանք կամ աշխատանք կատարելու համար անհրաժեշտ գիտելիքի ու փորձի առկայությունն է, որը ձևավորվում և ստուգվում է գործնական(սեմինար), լաբորատոր աշխատանքների ու անհատական առաջադրանքների կատարման ընթացքում:
- 1.5. **Կարողությունը** գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր (անկախ բնագավառից):
- 1.6. **Կրթական արդյունքը** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և(կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման համակարգով, որը հնարավորություն է տալիս դատել դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին:
- 1.7. **Կրթական ծրագրով** որոշվում է ուսումնառության տվյալ աստիճանում մասնագիտական ուղղվածությունը, կրթության բովանդակությունը, կրթական արդյունքի չափորոշիչները:
- 1.8. **Կրթական (ուսումնական) մոդուլը** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը մեկ կիսամյակ է՝ դրանով սահմանափակված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ:
- 1.9. **Ակադեմիական կրեդիտը** դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման համընդունելի պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:
- 1.10. **Կրեդիտային համակարգը** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ ուսանողին համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի և բովանդակության ձեռքբերումից հետո:
- 1.11. **Կրեդիտների կուտակման և փոխանցման ECTS համակարգը** միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որում ուսանողի մեկ ուսումնական տարվա լրիվ ուսումնական աշխատածավալը չափվում է 60 ECTS կրեդիտով:
Այն նախատեսված է եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:
- 1.12. ՀՀ-ում 1 ECTS կրեդիտը համարժեք է միջին առաջադիմության ուսանողի 30 ժամ ընդհանուր (լսարանային, արտալսարանային, ինքնուրույն և այլ) աշխատածավալին:
- 1.13. Ուսանողի շաբաթական ուսումնական առավելագույն աշխատածավալը 1,5 կրեդիտային միավոր է (համարժեք է 45 ժամին):
- 1.14. **Կրեդիտային համակարգի կարևորագույն հատկանիշներն են.**
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
 - կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման մեթոդները և այլ տեղեկատվություններ, հրապարակվում են վաղօրոք տեղեկագրերի տեսքով(տպագրվում և/կամ տեղադրվում են ԲՈՒՀ-ի կայքէջում):
 - կրեդիտը ուսանողին հատկացվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Կրեդիտը չի փոխարինում թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով: Ռեսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
 - կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը:
- 1.15. Կրեդիտային միավորով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային և արտալսարանային (նաև ինքնուրույն իրականացվող) բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը պրակտիկաներին, կուրսային և

ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանց հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն:

- 1.15.1. *Լսարանային բեռնվածություն*- ուսումնական աշխատաժամանակի բաղադրիչ, որն ընդգրկում է ուսումնառության կազմակերպման լսարանային ձևերի բոլոր տեսակները՝ դասախոսությունները, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքները:
- 1.15.2. *Արտալսարանային բեռնվածություն* - ուսանողի կողմից ինքնուրույն կամ դասախոսի հսկողությամբ կատարվող աշխատանքի համար հատկացվող ժամանակ՝ հանձնարարված գրականությունն ուսումնասիրելու և մշակելու, դասախոսությունների տեքստերը վերանայելու, գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքներին, ընթացիկ և կիսամյակային քննություններին նախապատրաստվելու, կուրսային, ավարտական և այլ տիպի աշխատանքները կատարելու համար:

2. ՎՊՄԻ-ում կրեդիտային միավորներով ուսուցման կազմակերպման հիմնական սկզբունքները

- 2.1. ՎՊՄԻ-ում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում ուսանողի ուսումնական կիսամյակի բեռնվածությունը սահմանվում է 30 կրեդիտային միավոր(10% թույլատրելի շեղումով), ուսումնական տարվա բեռնվածությունը՝ 60 կրեդիտային միավոր (տարեկան ուսումնական բեռնվածությունը՝ 1800 ակադեմիական ժամ):
- 2.2. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 կրեդիտային միավորին:
- 2.3. ՎՊՄԻ-ում ուսումնական գործընթացը կազմակերպվում է աշնանային և գարնանային կիսամյակներով: Ուսումնական կիսամյակների տևողությունը կազմում է 20 շաբաթ, որի ընթացքում իրականացվում են տեսական ուսուցումը, ընթացիկ ստուգումները, ստուգարքներն ու քննությունները, ուսումնական, արտադրական և հետազոտական (մագիստրատուրայում) պրակտիկաները, բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի շարադրման ու պաշտպանության աշխատանքները, ինչպես նաև պետական որակավորման քննությունները:
- 2.3.1. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը կազմում է 240 կրեդիտային միավոր:
- 2.3.2. Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը կազմում է 120 կրեդիտային միավոր:
- 2.4. Ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ բեռնվածություն:

3. Կրեդիտների հատկացումը

- 3.1. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար միջին առաջադիմության ուսանողից պահանջվող անհրաժեշտ աշխատաժամանակի իրատեսական կանխատեսումից:
- 3.2. Կրթական արդյունքի դրական գնահատման դեպքում մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ:
- 3.3. Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտները նախընտրելի է ունենան ամբողջական արժեքներ:
- 3.4. Դասընթացին (կրթական մոդուլին) հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև չկա միարժեք կապ: Լսարանային ժամերի թիվը կախված է պարապմունքների ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներից և այլն:
- 3.5. ՎՊՄԻ-ում, որպես կանոն, ընդունվում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտային միավորների լսարանային և արտալսարանային աշխատածավալների հետևյալ մոտավոր հարաբերակցությունը.
 - 3.5.1. Բակալավրիատում՝
 - *2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ դասախոսություն և 2 ժամ ինքնուրույն աշխատանք,*
 - *1.5 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ գործնական (սեմինար) և 1 ժամ ինքնուրույն աշխատանք,*
 - *2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 3 ժամ լաբորատոր աշխատանք և 1 ժամ ինքնուրույն աշխատանք,*

3.5.2. Մագիստրատուրայում՝

- 3 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ դասախոսություն և 4 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ գործնական (սեմինար) և 2 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ լաբորատոր աշխատանք և 2 ժամ ինքնուրույն աշխատանք:

3.5.3. Ընթացիկ և հանրագումարային ստուգումների համար.

- Զննությանը պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դիմաց հատկացվում է 0,5 կրեդիտային միավոր:
- Այն մասնագիտական առարկաներին, որոնց դասավանդումը հիմնականում իրականացվում է գործնական կամ լաբորատոր պարապմունքների ձևով և նախատեսվում է քննություն, քննությանը պատրաստվելու համար շաբաթական յուրաքանչյուր ժամի դիմաց հատկացվում է 0,125 կրեդիտային միավոր:
- Տեսական մասից ստուգարքով ավարտվող առարկայի ստուգարքին պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դիմաց հատկացվում է 0,25 կրեդիտային միավոր¹:

3.5.4. Պրակտիկաների յուրաքանչյուր շաբաթվան և պաշտպանությանը տրվում է 1,5 կրեդիտային միավոր:

3.5.5. Կուրսային աշխատանքի (մագիստրատուրայում նաև ռեֆերատի ու զեկուցման) կատարումը և պաշտպանությունը գնահատվում է 3 կրեդիտային միավորով:

3.5.6. Բակալավրիատի 4-րդ տարվա յուրաքանչյուր կիսամյակում բակալավրի ավարտական թեզի աշխատանքների կատարման համար տրվում է 3 կրեդիտային միավոր, շարադրմանը և պաշտպանությանը՝ 3 կրեդիտային միավոր (2 շաբաթ):

3.5.7. Մագիստրոսական ատենախոսության թեմայով հետազոտական աշխատանք կատարելու համար նախատեսվում է 18 կրեդիտային միավոր (ըստ կիսամյակների՝ 2,4,6,6), իսկ թեզի շարադրման և պաշտպանության համար՝ 12 կրեդիտային միավոր:

3.5.8. Պետական ավարտական յուրաքանչյուր քննության նախապատրաստվելու և հանձնելու համար տրվում է 3 կրեդիտային միավոր (2 շաբաթ):

3.5.9. Մարմնակրթության համար կրեդիտային միավորներ չեն նախատեսվում:

4. Ուսումնական ծրագրերը, դասընթացները (կրթական մոդուլները) և ավարտական պահանջները

4.1.1. Բակալավրի կրթական ծրագիրը ներառում է վեց հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական(ՋՍՍ), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական(ԸՍԲ), ընդհանուր մասնագիտական(ԸՄԴ) և հատուկ մասնագիտացման դասընթացներ(ՋՄԴ), ընդհանուր առողջապահական (ԸԱ), ինչպես նաև կրթական այլ բաղադրիչներ(ԱԲ) (հավելված 1):

4.1.2. Մագիստրատուրայի ուսումնական ծրագիրը ներառում է չորս կրթամաս՝ ընդհանուր մասնագիտական առարկաներ(ԸՄԱ), մասնագիտական դասընթացներ (ՄԴ), ընդհանուր մանկավարժահոգեբանական և մասնագիտացման առարկաներ (ԸՄՄԱ) և կրթական այլ բաղադրիչներ(ԱԲ):

4.2. Կրթական ծրագրում ներառված կրթական մոդուլները ունեն իրենց դասիչները և ներկայացվում են հատկացված կրեդիտներով ու լսարանային ծանրաբեռնվածությունով: Նշվում է նաև առարկայի դասավանդման կիսամյակը և նախապայմանները:

4.3. Մեծածավալ դասընթացները բաժանվում են մեկ կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների: Դասընթացների մոդուլացումը կատարվում է՝ ելնելով նվազագույն կիսամյակների ընթացքում դասընթացն ավարտելու սկզբունքից:

4.4. Դասընթացներն իրենց բնույթով բաժանվում են երեք հիմնական խմբերի՝

- ա) **պարտադիր դասընթացներ** - բարձրագույն կրթության կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրի հիմնական դասընթացներ, որոնք դասավանդվում են պարտադիր և խիստ որոշակի հերթականությամբ՝ համաձայն տվյալ ուղղության մասնագետների պատրաստմանը ներկայացվող պահանջներին:

¹) Նմանատիպ առարկաների դասախոսություններն ու սեմինար (գործնական) պարապմունքներն անցկացվում են նույն դասախոսի կողմից:

- բ) **պարտադիր ընտրովի դասընթացներ** - որոնց ուսումնասիրման կիսամյակը ընտրում է ուսանողը՝ պահպանելով դրանց նախապայմանները:
- գ) **ընտրովի դասընթացներ** - պետական չափորոշիչներից բխող և ֆակուլտետների կողմից առաջարկվող դասընթացներ, որոնք ընտրում է ուսանողը առաջարկվող ցանկից, իսկ դրանց անցկացման հաջորդականությունը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:
- 4.5. Ծրագրում նշվում է նաև դասընթացների յուրաքանչյուր կրթամասին հատկացված կրեդիտային միավորների գումարը:
- 4.6.1. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ՎՊՄԻ ուսանողը պետք է հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (ներառյալ կուրսային աշխատանքները և պրակտիկաները), որոնց համար հաշվարկված հանրագումարային *միջին որակական գնահատականը* (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 2,7՝ ներառյալ 3 կրեդիտ արժեքով մասնագիտական ամփոփիչ քննությունը և 9 կրեդիտ արժեքով ավարտական աշխատանքը:
- 4.6.2. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ՎՊՄԻ ուսանողը պետք է հաջողությամբ լրացնի 120 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (ներառյալ կուրսային աշխատանքները և պրակտիկաները), որոնց համար հաշվարկված հանրագումարային *միջին որակական գնահատականը* (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 2,7՝ ներառյալ 3 կրեդիտ արժեքով մասնագիտական ամփոփիչ քննությունը և 30 կրեդիտ արժեքով ավարտական աշխատանքը:

5. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

5.1. Համակարգի հիմնադրույթները

- 5.1.1. ՎՊՄԻ-ում գործում է բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝
- ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բարելավել դասահաճախումները,
- բ) անհատական առաջադրանքների, ընթացիկ և հանրագումարային ստուգումների (ստուգարքների և քննությունների), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառման օգնությամբ ապահովել ուսանողի գիտելիքների և կարողությունների արդյունարար գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը:
- 5.1.2. Ստուգարքներին և քննություններին ուսանողի պատրաստվածության մակարդակին ներկայացվող պահանջները պետք է ապահովեն գիտելիքների համակողմանի ստուգումը, ապագա մասնագետի մասնագիտական հմտությունների և կարողությունների գնահատումը՝ համաձայն մասնագիտական համապատասխան կրթական չափորոշիչի:
- 5.1.3. Հանրագումարային ստուգումները (քննությունները և ստուգարքները) նպատակ ունեն գնահատելու տվյալ կիսամյակում ուսանողի ստացած տեսական և գործնական գիտելիքները, դրանց կայունությունը, ստեղծագործական մտածողության զարգացումը, ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձեռքբերումը, ստացած գիտելիքների համադրումը և դրանց կիրառումը գործնական խնդիրների լուծման ժամանակ:
- 5.1.4. Ընթացիկ ստուգումը կիսամյակի ընթացքում դասընթացի որոշակի բաժինների յուրացման մակարդակի ստուգման և գնահատման ձև է, որի կիրառումը՝
- ա) նպաստում է առարկայից առավել կայուն գիտելիքների տիրապետմանը՝ կիսամյակի ընթացքում ուսանողի անընդհատ և համաչափ աշխատանքի միջոցով,
- բ) դյուրացնում է հմտությունների և կարողությունների ձեռքբերման գործընթացը՝ հնարավորություն ընձեռելով ուսանողին դասընթացը հանձնելու մաս առ մաս,
- գ) բարձրացնում է ուսանողի ուսումնական կարգապահությունը,
- դ) նպաստում է ուսանողի անկախության մեծացմանը:
- 5.1.5. Յուրաքանչյուր կիսամյակում ընթացիկ ստուգումների, ստուգարքների և քննությունների համար սահմանվում են ժամկետներ՝ ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի:
- 5.1.6. Ընթացիկ և հանրագումարային ստուգումների կազմակերպման, անցկացման և ամփոփման, ինչպես նաև ուսանողների վարկանիշների հաշվառման աշխատանքները կատարվում են համապատասխան դեկանատների կողմից և ամփոփվում ուսումնական վարչությունում:
- 5.1.7. Գիտելիքների ստուգումը և գնահատումը իրականացվում են հետևյալ բաղադրիչներով՝

- ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով,
- բ) գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության, պարապմունքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում,
- գ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) հաշվառում և գնահատում,
- դ) կրթական մոդուլի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ),
- ե) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, անհատական առաջադրանքների, գործնական(սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի ակտիվության, հմտությունների և կարողությունների գնահատման, ընթացիկ և հանրագումարային գնահատումների հիման վրա դասընթացի (կրթական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

5.2. Գնահատման մեթոդաբանությունը

5.2.1. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բնույթից, աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ ստուգման ձևի բաժանվում են 2 խմբի՝

- ա) *քննությունով ավարտվող դասընթացներ,*
- բ) *ստուգարքով ավարտվող դասընթացներ:*

Տվյալ մասնագիտության դասընթացներից ուսանողների գիտելիքների, մասնագիտական կարողությունների և հմտությունների ստուգման ձևերը ամրագրվում են մասնագիտության ուսումնամեթոդական փաթեթում:

5.2.2. Քննությամբ են ավարտվում բուն մասնագիտական և ընդհանուր մասնագիտացման կրթամասերի այն պարտադիր դասընթացները (մոդուլները), որոնց լսարանային ժամաքանակը կիսամյակում կազմում է առնվազն 51 ժամ (որից առնվազն 34 ժամը դասախոսություն է): Այս կրթամասերի մնացած դասընթացների, ինչպես նաև մյուս կրթամասերի դասընթացների ստուգման ձևը ամբիոնի առաջարկությամբ որոշվում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդում:

5.2.3. Քննությամբ ավարտվող դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող հանրագումարային քննության (այսուհետ՝ **ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**) հետ մեկտեղ նախատեսում է **2 գրավոր ընթացիկ քննություն:**

- Սահմանվում են գրավոր քննության առաջադրանքի հետևյալ ձևերը. ըստ հարցաչարի, թեսթի, ստուգողական աշխատանքի, վերջիններիս զուգակցմամբ կամ ըստ ստեղծագործական աշխատանքի:
- Ընթացիկ գրավոր քննության առաջադրանքի մի մասը, որպես կանոն, կազմվում է թեսթային առաջադրանքի տեսքով:
- Բացառիկ դեպքում, ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ, ընթացիկ քննությունը կարող է անցկացվել նաև գրավոր-բանավոր ձևով:

5.2.4. Ստուգարքով եզրափակվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2-4 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով ամփոփվող ստուգարքով:

Ընթացիկ ստուգումներն անցկացվում են կարճ հարցումների, փոքրածավալ գրավոր/ստուգողական աշխատանքների և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն ընտրում և ղեկավարի հետ համաձայնեցնում է դասընթացը կազմակերպող ամբիոնը:

5.2.5. Ուսումնական պլանով նախատեսված լաբորատոր աշխատանքների արդյունքների ամփոփման ու ներկայացման ձևը հաստատվում է համապատասխան ամբիոնում: Ուսանողները լաբորատոր աշխատանքները կատարում են տվյալ առարկայի լաբորատոր աշխատանքները վարող դասախոսի անմիջական ղեկավարությամբ և հսկողությամբ:

Լաբորատոր աշխատանքներն ամփոփվում են կատարողական ստուգարքով:

5.2.6. Բնությամբ ավարտվող դասընթացից (կրթական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գքճճ.) ձևավորվում է ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) **Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Գ₁ :**

- Լսարանային պարապմունքներին լիարժեք մասնակցության դեպքում ուսանողը վաստակում է 20 միավոր:
- **Լսարանային պարապմունքներին 50% և ցածր հաճախումների դեպքում մասնակցության համար միավոր չի հատկացվում (տեղեկագրում գրվում է զրո):**
- **Տվյալ դասընթացի լսարանային պարապմունքներից բացակայությունների դեպքում հատկացվող միավորը որոշվում է ըստ աղուսյակ 1–ի (տես հավելված 2):**
- Լսարանային պարապմունքներին և պրակտիկաներին ուսանողների հաճախումները դասամատյանում գրանցում է խմբի(կուրսի) ավագը այդ աշխատանքները վարող դասախոսի (պրակտիկայի ղեկավարի) հսկողությամբ: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում խմբի խորհրդատուն ամփոփում է հաճախումների արդյունքները դասամատյանում:
- Տվյալ առարկայի դասընթացից անհարգելի բացակայությունների և(կամ) ցածր առաջադիմության դեպքում ուսանողը յուրաքանչյուր ամսվա վերջում ակադեմիական խորհրդատուի կամ դեկանատի ներկայացուցչի կողմից ստանում է նախազգուշացում, ինչն ուսանողի ստորագրությամբ գրանցվում է հաշվառման մատյանում:
- Տվյալ ամսվա ընթացքում համապատասխան փաստաթղթով վավերացված հարգելի բացակայությունների դեպքում, դեկանատի գրավոր թույլտվությամբ, ամբիոնը կազմակերպում է չկատարված լաբորատոր աշխատանքների անցկացում և գործնական (սեմինար) աշխատանքների խորհրդատվություն, որից հետո բաց թողած դասաժամերը հաշվի չեն առնվում դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը որոշելիս:
- **Կիսամյակում դասընթացի լսարանային պարապմունքների մասնակցությանը համապատասխան միավորը գրանցվում է դասընթացի գնահատման տեղեկագրում (տես ձևաթերթ 4.1 կամ 4.2, հավելված 3 և 4):**

բ) **Ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ Գ₂, որին հատկացվում է 10 միավոր:**

- Ինքնուրույն աշխատանքի ձևերից են ռեֆերատը, անհատական տնային առաջադրանքները, հանձնարարված մասնագիտական գրականության մշակումները, արտալսարանային ընթերցանությունը, թեմատիկ զեկուցումների նախապատրաստումը և այլն:
- Կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասընթացից կարող են հանձնարարվել առնվազն 2 անհատական առաջադրանքներ:
- Եթե ինքնուրույն աշխատանքը (անհատական առաջադրանքը) նշանակված ժամանակահատվածում կատարված է առնվազն կիսով չափ և ուսանողը կարողանում է այն ներկայացնել, ապա աշխատանքը գնահատվում է դրական (8-20 միավոր):
- Բոլոր առաջադրանքների դրական միջինի դեպքում (8-20 միավոր) ուսանողը ստանում է ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված 10 միավորը: Հակառակ դեպքում ուսանողն ինքնուրույն աշխատանքի համար միավոր չի վաստակում (տեղեկագրում գրվում է զրո):
- **Ինքնուրույն աշխատանքի (անհատական առաջադրանքների) գնահատականները և հատկացվող միավորները նշանակվում են առանձին տեղեկագրում (տես ձևաթերթ 1, հավելված 5), իսկ հատկացվող միավորը փոխանցվում է դասընթացի գնահատման տեղեկագիր (հավելված 3 կամ 4):**

գ) **Գործնական և/կամ սեմինար ու լաբորատոր աշխատանքների անցկացմանը ուսանողի մասնակցությունից և պարապմունքների ընթացքում նրա ակտիվությունից (Գ₃), որը գնահատվում է 20 միավորով:**

- Նշված պարապմունքները կրթական գործընթացի կարևորագույն տարրերից են, որոնց անցկացմանը ուսանողի մասնակցությունը և ակտիվությունը գնահատվում է դասախոսի կողմից և արձանագրվում է դասամատյանում (գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով):
- Յուրաքանչյուր շաբաթվա վերջում խորհրդատուն դասամատյանում ամփոփում է գործնական (սեմինար) ու լաբորատոր աշխատանքներին, դասագործընթացին ուսանողների մասնակցության և ակտիվության գնահատման արդյունքները:

- *Կիսամյակում դասընթացի գործնական(սեմինար) ու լաբորատոր աշխատանքներին ուսանողների մասնակցության և ակտիվության գնահատման արդյունքների միջինը և հատկացվող միավորը գրանցվում են տեղեկագրում (ձևաթերթ 2, հավելված 6):*
 - *Միջին դրական (8 և ավելի) գնահատականի դեպքում դասընթացի գնահատման տեղեկագրում (ձևաթերթ 4.1 կամ 4.2, հավելված 3 և 4) ուսանողին տրվում է 20 միավոր, իսկ 8-ից ցածր արդյունքի դեպքում՝ միավոր չի հատկացվում (տեղեկագրում գրվում է զրո):*
- դ) Ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից տեսության յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ դրական (8 և բարձր) գնահատված քննությունների միջին գնահատականի կամ քննության ընթացքում այդ միջինի բարձրացված արդյունքից (Գ₄):
- *ընթացիկ քննությունների միջին դրական գնահատականը հաշվի է առնվում, եթե ուսանողի գործնական(սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատված են դրական:*
 - Տվյալ դասընթացի ընթացիկ քննությունը չհանձնած կամ դրանցից մեկից 8-ից ցածր միավոր հավաքած ուսանողը *քննության օրը՝ մինչև բանավոր քննությունը*, պարտավոր է գրավոր հանձնել չհանձնված մասից քննություն:
 - *Բանավոր քննության* թույլատրվում են.
 - ա) այն ուսանողները, որոնք գրաֆիկով նշանակված ժամկետներում դրական գնահատականներով հանձնել են տվյալ դասընթացի ընթացիկ քննությունները և ակնկալում են դրական գնահատված մասերի համապատասխան գնահատականի բարձրացում,
 - բ) բարձր առաջադիմություն ցուցաբերող այն ուսանողները, որոնք չեն հանձնել տվյալ դասընթացի միայն մեկ ընթացիկ քննությունը, սակայն մյուս բոլոր ընթացիկ քննությունները հանձնել են 13 և ավելի միավորներով ու քննության օրը գրավոր հանձնել այդ չհանձնված մասի ընթացիկ քննությունը՝ 13 և ավելի միավորով (կարող են ակնկալել գնահատականի բարձրացում):
 - *Քննությունները գնահատվում են առավելագույնը 20 միավորով: Վերջնական գնահատման ժամանակ քննությունների գնահատականը կլորացվում է:*
 - *Ընթացիկ և հանրագումարային քննությունների արդյունքները գրանցվում են քննությունների տեղեկագրում (ձևաթերթ 3.2, հավելված 8):*
- ե) Ուսանողի՝ գիտելիքների կիրառության գործնական հմտություններից (Գ₅), որը գնահատվում է 1-10 միավորներով, եթե ուսանողը հանձնել է քննությունն ու գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատվել են 11-20 միավորներով և ինքնուրույն կատարվող աշխատանքները (անհատական առաջադրանքները) գնահատվել են դրական (կախված դասընթացի բնույթից՝ ամբիոնի որոշմամբ, առաջնայինը կարող է լինել ինքնուրույն կատարվող աշխատանքների 11-20 միավորը):
- *10-ից բարձր գնահատականի դեպքում գործնական կարողությունների համար տրվում է 10-ը գերազանցող միավորներին հավասար միավոր (ավտոմատ գրանցվում է ձևաթերթ 2-ում, տես՝ հավելված 6):*
- զ) Տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) ուսուցման արդյունքում ուսանողի ձեռք բերած կարողությունների և հմտությունների գնահատումից (Գ₆), որին հատկացվում է առավելագույնը 20 միավոր:
- Ուսանողի ցուցաբերած կարողություններն ու հմտությունները սերտորեն կապվում են ձեռք բերած տեսական գիտելիքներն ինքնուրույն ներկայացնելու և կիրառելու ունակությունների հետ և արժևորվում են տեսական գիտելիքների դրական գնահատման դեպքում:
 - Ուսանողի ցուցաբերած կարողությունների ու հմտությունների համար հատկացվող միավորը որոշվում է քննության ընթացքում դասախոսի կողմից և չի կարող ցածր լինել 2 ընթացիկ դրական (8 և բարձր) գնահատված քննությունների միջին գնահատականից և գերազանցել հանրագումարային քննության միավորին:
- 5.2.7. Դասընթացի (կրթական մոդուլի) հանրագումարային միավորը (գնահատականը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար և ավտոմատ գրանցվում է ձևաթերթ 4.2-ում (տես հավելված 4)՝
- $$Գ_{քնն} = Գ_1 + Գ_2 + Գ_3 + Գ_4 + Գ_5 + Գ_6$$
- 5.2.8. Ընթացիկ քննություններ չունեցող առարկաների քննության անցկացման ձևը (գրավոր, բանավոր կամ գրավոր-բանավոր) սահմանվում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ և ռեկտորատի համաձայնությամբ:

- 5.2.9. Ստուգարքով ավարտվող դասընթացից (կրթական մոդուլից) ուսանողի ստացած հանրագումարային/կիսամյակային միավորը (գնահատականը) ($Q_{\text{ստ.}}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝
- ա) Դասընթացի լսարանային պարապմունքների ուսանողի մասնակցության աստիճանից՝ Q_1 , որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 20 միավոր (գրանցվում է ձևաթերթ 4.1-ում, հավելված 3) (տես 5.2.6.ա կետը):
- բ) Ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ Q_2 , որին հատկացվում է 10 միավոր (գրանցվում է ձևաթերթ 4.1-ում, հավելված 3) (տես 5.2.6.բ կետը):
- գ) Գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցությունից և ակտիվությունից (Q_3), որին տրվում է 20 միավոր (ձևաթերթ 2, հավելված 6) (տես 5.2.6.գ կետը):
- դ) ուսանողի կողմից ուսուցանվող նյութի յուրացման աստիճանի ստուգման, ձեռք բերված գործնական հմտությունների ու կարողությունների գնահատման նպատակով անցկացվող 2-4 ընթացիկ ստուգումների դրական գնահատված (8 և բարձր) արդյունքների միջին գնահատականից (Q_4):
- **Ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 20 բալանոց համակարգով:**
 - **Ստուգման արդյունքները գրանցվում են ստուգարքների տեղեկագրում (ձևաթերթ 3.1, տես՝ հավելված 7):**
- ե) Տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) ուսուցման ընթացքում ուսանողի ձեռք բերած հմտությունների (Q_5) և կարողությունների (Q_6) գնահատումից: Այս դեպքում նորից հմտություններն ու կարողությունները արժևորվում են տեսական և գործնական գիտելիքների դրական գնահատման դեպքում (ձևաթերթ 3.1, հավելված 7) (տես 5.2.6. ե և գ կետերը):
- 5.2.10. Դասընթացի (կրթական մոդուլի) ընդհանուր միավորը (գնահատականը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար (ձևաթերթ 4.1, տես՝ հավելված 3)՝

$$Q_{\text{ստ.}} = Q_1 + Q_2 + Q_3 + Q_4 + Q_5 + Q_6$$

- 5.2.11. Ընթացիկ քննություններից կամ ստուգումներից չառաջադիմող ուսանողների հետ ամբիոնները պարտավոր են անցկացնել լրացուցիչ և (կամ) անհատական պարապմունքներ՝ ըստ ժամանակացույցի:
- 5.2.12. Պրակտիկական գնահատվում է ստուգարքի ձևով՝ 100 միավորանոց սանդղակով: Ուսումնական կամ արտադրական պրակտիկաներից հարգելի կամ անհարգելի բացակայությունները չեն լրացվում: 75%-ից պակաս մասնակցության դեպքում պրակտիկան համարվում է ակադեմիական պարտք:

6. Կիրարկման ընթացակարգը

- 6.1. Ընթացիկ և հանրագումարային ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, ստուգումների ձևերը, հարցաշարերը, թեսթային կամ այլ առաջադրանքները և ստուգումների անցկացման ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշներն ուսանողներին տրամադրվում են նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):
- 6.2. Ընթացիկ քննությունների ու ստուգումների, ստուգարքների ու քննությունների ժամանակացույցերը կազմվում են ֆակուլտետներում, ներկայացվում ուսումնական վարչություն և հաստատվում ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:
- 6.3. Արգելվում է առանց ռեկտորատի թույլտվության և ուսանողների համաձայնության քննության վաղաժամկետ ընդունումը կամ հետաձգումը:
- 6.4. Ստուգման ձևի ընտրությունը և անհրաժեշտ նյութերի պատրաստումը իրականացվում է համապատասխան ամբիոնում, քննարկվում և հաստատվում է ամբիոնի միստում և կիսամյակի սկզբում տրամադրվում է ուսանողներին: Գրավոր ստուգման տարբերակում յուրաքանչյուր հարցի համար պետք է նշվի գնահատման առավելագույն միավորը, իսկ առաջադրանքի ծավալը համապատասխանի հատկացվող ժամանակահատվածին (**ընթացիկ քննության համար՝ առնվազն 120 րոպե**):
- 6.5. Ընթացիկ քննությունները, որպես կանոն, անցկացվում են ուսումնառության կիսամյակի 7-8-րդ և 15-16-րդ շաբաթներում (7-րդ և 8-րդ կիսամյակում՝ 5-րդ և 10-րդ շաբաթներում): **Ընթացիկ քննության օրն անցկացվում են միայն այդ օրվա դասացուցակով նախատեսված դասախոսությունները:**

- 6.6.Ստուգարքով ավարտվող առարկայի ընթացիկ ստուգումներն անցկացվում են ստուգումների թվով համամասնորեն բաժանված ժամանակահատվածներում: Ընթացիկ ստուգումն անցկացվում է տվյալ առարկան դասավանդող դասախոսի կողմից՝ դասացուցակով առարկային հատկացված ժամերին *(ուսանողը դասերից չի ազատվում)*:
- 6.7.Ընթացիկ քննության կամ ստուգման արդյունքների գնահատումն ու քննարկումն անցկացվում է դասերից հետո՝ անհատական աշխատանքների համար նախատեսված ժամերի շրջանակում՝ առարկան դասավանդող դասախոսի կամ ամբիոնի որոշմամբ՝ նույն առարկան դասավանդող այլ դասախոսի կողմից՝ ստուգմանը հաջորդող աշխատանքային երկու օրվա ընթացքում:
- 6.8.Գրավոր ստուգման արդյունքները վերջնական ամփոփումից հետո գրանցվում են համապատասխան տեղեկագրում (արդյունքները փակցվում են ի տես բոլորի):
- 6.9.Յետագա մեկ օրվա ընթացքում ուսանողն իրավունք ունի որոշակի հարց(եր)ի գնահատումը բողոքարկելու նպատակով գրավոր դիմել դեկանին, որը համապատասխան ամբիոնի վարիչի հետ կազմակերպում է բողոքի քննարկումը երեք աշխատանքային օրվա ընթացքում:
Քննարկման արդյունքի մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է տեղեկագրին:
- 6.10.Ընթացիկ կամ հանրագումարային ստուգմանը(ստուգարքին, քննությանը) դասախոսի բացակայության դեպքում ստուգումն իրականացվում է ամբիոնի այլ դասախոսի կամ հանձնաժողովի կողմից՝ դեկանի համաձայնությամբ (առանձին դեպքերում հարցը լուծվում է ռեկտորի կամ պրոռեկտորի կողմից):
- 6.11. ***Ընթացիկ ստուգումից բացակայության դեպքում լրացուցիչ ստուգում չի կազմակերպվում և տեղեկագրում գրանցվում է «չներկայացած»:***

7. Ստուգարքների ամփոփումը

- 7.1.Ստուգարքներն ամփոփվում և ավարտվում են յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի առաջին շաբաթվա ընթացքում:
- 7.2.Ուսումնական պարապմունքների վերջին երկու շաբաթվա ընթացքում ամբիոնները պարտավոր են ապահովել բացակայության պատճառով չառաջադիմող ուսանողների հետ լրացուցիչ պարապմունքների անցկացումը ըստ ժամանակացույցի: Լրացուցիչ պարապմունքների ժամանակացույցի մեջ պետք է նկատի առնվեն չկատարված լաբորատոր աշխատանքների կատարումը և գործնական(սեմինար) աշխատանքների խորհրդատվությունը: Աշխատանքները կարող են կազմակերպվել նաև անհատական պարապմունքների ձևով:
- 7.4.1. Եթե ուսանողը հանձնել է բոլոր ընթացիկ ստուգումները և ունի 58 կամ ավելի միավորներ, ապա տվյալ առարկայի ստուգարքը համարվում է հանձնված:
- 7.4.2. 30-57 միավորների դեպքում թույլատրվում է հանձնել ստուգարքը գրավոր ձևով:
- 7.4.3. 30-ից փոքր միավորների դեպքում ուսանողը գնահատվում է «Չստուգված»:

8.Քննություններն անցկացումը

- 8.1.1. Բակալավրիատում քննություններն անցկացվում են կիսամյակային քննաշրջաններում՝ 19-20-րդ շաբաթներում (7-րդ և 8-րդ կիսամյակում՝ 16-17-րդ շաբաթներում):
- 8.1.2. Մագիստրատուրայի 1-3-րդ կիսամյակներում քննաշրջանները կազմակերպվում են 18-20-րդ շաբաթներում (ներառում է նաև կուրսային աշխատանքի, ռեֆերատի ու զեկուցման պաշտպանությունը):
- 8.2. Քննությունների անցկացման ժամանակացույցը՝ **ուսանողական խմբերի առաջադրմամբ**, կազմվում է դեկանատներում, ներկայացվում ուսումնական վարչություն և հաստատվում ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից քննաշրջանը սկսվելուց մեկ ամիս առաջ: Յուրաքանչյուր քննության նախապատրաստման համար պետք է տրամադրվի առնվազն 3 օր:
- 8.3.Քննություններն անցկացվում են հարցատոմսերով, **որոնք հաստատվում են ամբիոնի նիստում քննաշրջանից մեկ ամիս առաջ:**
- 8.4.1.Քննության ընդունման ընթացքում կարող են գործածվել տեխնիկական միջոցներ:
- 8.4.2.Դասախոսն իրավունք ունի տալու լրացուցիչ կամ ուղղորդող հարցեր:
- 8.4.3.Քննության ընթացքում տվյալ դասընթացից խնդիրներ կամ այլ գործնական առաջադրանքներ տալու դեպքում դասախոսը պարտավոր է ուսանողներին ապահովել խնդրագրքերով, առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ մեթոդական և տեղեկատու ձեռնարկներով:
- 8.5. Կրթական յուրաքանչյուր մոդուլ գնահատվում է առանձին, և հարցատոմսերն ընդգրկում են միայն տվյալ կիսամյակում դասավանդված թեմաները:

- 8.6. Բանավոր քննության ընթացքում ստացած գնահատականին ուսանողի անհամաձայնության դեպքում ուսանողը քննասենյակում հայտարարում է, որ համաձայն չէ իր գնահատականին և անմիջապես այդ մասին գրավոր դիմում է դեկանին, որն էլ համապատասխան ամբիոնի վարիչի (անհրաժեշտության դեպքում նաև քննությունները վերահսկող հանձնաժողովի ներկայացուցչի) հետ կազմակերպում է քննության քննարկումը, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:
- 8.7. ***Տվյալ առարկայից դրական գնահատական (58 և ավելի միավորներ) ունեցող ուսանողը կարող է չմասնակցել այդ առարկայի քննությանը՝ պահպանելով իր գնահատականը կամ մասնակցելով քննությանը՝ բարձրացնել դրական գնահատականը, որը ենթակա չէ իջեցման:***
- 8.8. Քննության (ստուգարքի) վերջում քննվող երեք ուսանողները քննասենյակից դուրս են գալիս վերջին ուսանողի պատասխանից հետո:
- 8.9. Ուսումնական վարչության և դեկանի կողմից հաստատված քննության (ստուգարքի) տեղեկագիրը դասախոսին տրվում է քննության օրը: Տեղեկագրի մեջ դեկանի կողմից կարող են կատարվել հետևյալ գրառումները.
- **«Քննության չի թույլատրված»** (թանաքով), այն ուսանողների անվան դիմաց, ովքեր քննաշրջանին կամ տվյալ առարկայի քննությանը (ստուգարքին) մասնակցելու թույլտվություն չունեն,
 - **բազմագործոնային համակարգով դրական գնահատված քննության (կամ ստուգարքի) գնահատականի նիշը և «Փոխանցվում է»** գրառումը (թանաքով), եթե ուսանողը տվյալ կրթական մոդուլից ունի դրական գնահատական (այլ բուհից տեղափոխություն, ուսանողական իրավունքի վերականգնում և այլն) և չի ցանկանում մասնակցել այդ քննությանը (ստուգարքին), ինչի մասին նա նախօրոք գրավոր տեղեկացնում է դեկանին²:
- Կրեդիտային համակարգի ներդրումից առաջ ստացված գնահատականները փոխանցվում են միջին արժեքով ըստ հավելված 9-ի աղյուսակի²:***
- 8.10. Քննության ներկայանալիս ուսանողը պարտավոր է դասախոսին ներկայացնել ստուգման գրքույկը: Դասախոսը քննական տեղեկագրում գրանցում է ուսանողի ստուգման գրքույկի համարը, հարցատոմսի համարը, ուսանողի պատասխանից հետո՝ բարձրաձայն հայտնում գնահատականը, որից հետո գրանցում է տեղեկագրում, դրական գնահատականը նաև ստուգման գրքույկում: Կարգի խախտման դեպքում դասախոսը ենթակա է նկատողության:
- 8.11. Ամփոփված քննական տեղեկագիրը դասախոսը դեկանատ է ներկայացնում քննության ավարտից անմիջապես հետո:
- 8.12. Բանավոր քննությունը կազմակերպվում է մեկ օրվա ընթացքում մեկ ենթախմբի համար:
- 8.13. Ուսանողների գիտելիքների գնահատման համար երաշխավորվում են 9.4 կետում ներկայացված չափանիշները:

9. Գնահատման սանդղակը և նշագրումը

- 9.1. ՎՊՄԻ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է հավելված 9-ում:
- 9.2. Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ 87 («գերազանց»)):
- 9.3. Այն դասընթացներին, որոնցից ուսանողը վաստակել է 58-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն հատկացվում և ստուգարքային գրքույկում նշում չի կատարվում:
- 9.4. Ընթացիկ և հանրագումարային ստուգումների ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ չափանիշները.
- 18-20 միավոր նշանակվում է այն ուսանողին, որն ստուգման ներկայացված ուսումնական նյութին տիրապետում է համակողմանիորեն, ունի համակարգված և խոր գիտելիքներ, ազատ կատարում է ծրագրով նախատեսվող առաջադրանքները, յուրացրել է հիմնական և լրացուցիչ գրականությունը:
 - 13-17 միավոր նշանակվում է այն ուսանողին, որը ցուցաբերում է ստուգման ներկայացված ողջ նյութի իմացություն, կատարում է ծրագրով նախատեսվող առաջադրանքները, յուրացրել է հիմնական գրականությունը:

²) Կրեդիտային միավորը և գնահատականը փոխանցվում են սույն կանոնակարգի 15.2 կետի պայմանների բավարարման դեպքում:

- 8-12 միավոր նշանակվում է այն ուսանողին, որը գիտե ստուգման ներկայացված հիմնական ուսումնական նյութն այն ծավալով, որն անհրաժեշտ է հետագա ուսման ու աշխատանքի համար, և ծանոթ է հիմնական գրականությանը:
 - 0-7 միավոր նշանակվում է այն ուսանողին, որը չի յուրացրել նյութը, թույլ է տալիս էական սխալներ, չի կատարում առաջադրանքները **(0-7 միավորը չի համարվում դրական գնահատական և չի նշվում ուսանողի ստուգման գրքույկում):**
- 9.5. Բնության ժամանակ կամ գրավոր աշխատանքի կատարման ընթացքում ուսանողի անազնվությունը հայտնաբերելիս (ծածկաթերթիկից կամ այլ արգելված աղբյուրից օգտվելու դեպքում) այդ ուսանողի քննությունը (գրավոր աշխատանքը) դադարեցվում է և տեղեկագրում գրանցվում է 0(զրո):

10. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

- 10.1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ՎՊՄԻ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած հանրագումարային գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը (հավելված 10):
- 10.2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:
- 10.3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- **Ծրագրային (գումարային) կրեդիտների (ԾԿ) քանակը**
- **Գնահատված կրեդիտների (ԳԿ) քանակը**
- **Վարկանիշային միավորները (ՎՄ)**
- **Միջին որակական գնահատականը (ՄՈԳ):**

10.3.1. Ծրագրային(գումարային) կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած բոլոր կրեդիտների գումարն է:

10.3.2. Գնահատված կրեդիտը (ԳԿ) այն դասընթացների կրեդիտների գումարն է, որոնք գնահատված են տարբերակված գնահատականներով.

$$\text{ԳԿ} = \sum \text{Կրեդիտ}$$

10.3.3. Վարկանիշային միավորը (ՎՄ) բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող ECTS գնահատականների արտադրյալների գումարն է.

$$\text{ՎՄ} = \sum (\text{Կրեդիտ} \times \text{ԹԳ})$$

որտեղ **ԹԳ** տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար ECTS թվային գնահատականն է: Օրինակ, եթե 5 կրեդիտով դասընթացը գնահատվել է 72 (ECTS համակարգում B⁻(4-լավ), ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է 5կրեդիտ x 4 = 20` 25 հնարավորից:

Ստուգարքով ավարտվող առարկաների համար ԹԳ=0:

10.3.4. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) գնահատականների կրեդիտներով կշռված միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01 ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\sum \text{ԳԿ}}$$

10.4. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված տվյալ կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

10.5. Ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում բուհը պարտավոր է, համաձայն բուհում գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

11. Ուսանողի առաջադիմությունը

- 11.1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են առաջադիմողների, փորձաշրջանի կարգավիճակում գտնվողների և հեռացման ենթակա ուսանողների:
- 11.2. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե կատարել է հետևյալ պահանջները.
- Կիսամյակում ունի 30 կրեդիտ (10% թույլատրելի շեղումով) միջին ուսումնական բեռնվածություն (բայց մեկ ուսումնական տարվա համար՝ պարտադիր 60 կրեդիտ):
 - Հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների անհրաժեշտ կրեդիտները:
 - Ապահովել է տվյալ կրթական աստիճանի (ծրագրի) համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն շեմը:
- 11.3. Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում, եթե չի բավարարել նախորդ կետում նշված երեք պայմաններից որևէ մեկը:
- 11.4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:
- 11.5. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը դառնում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետներում (պարտքերի մարում) չի ուղղում իր թերացումներն ու բացթողումները:
- 11.6. Մինևույն կրթական ծրագրում ընդգրկված (հնարավոր է՝ տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող) ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, ներբուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց վարկանիշային միավորների օգնությամբ՝ ըստ բուհում մշակված կարգի:

12. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

- 12.1. Դրական գնահատված դասընթացի քննության(ստուգման) կրկնում(վերահանձնում) չի թույլատրվում:
- 12.2. *Ստուգմանը, ստուգարքին կամ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի քննության օրը և դրան հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում ինստիտուտի ընդհանուր բաժնում գրանցված բժշկական տեղեկանքի կամ բացակայությունը հիմնավորող այլ փաստաթղթի առկայության դեպքում:*
- 12.3. Քննություններին հաջորդող **երեք** աշխատանքային օրերին կազմակերպվում են քննաշրջանի մեջ համարվող «բաց դռների օրեր», որոնց ընթացքում ուսանողը կարող է
- հանձնել **հարգելի պատճառներով** քննաշրջանում եզրափակիչ քննությանը չներկայացած քննությունը՝ 58 և բարձր միավորի դեպքում (քննություններից մեկը),
 - վերահանձնել մեկ «անբավարար» գնահատված (31-57 միավորների դեպքում) քննություն կամ ստուգարք: Այս դեպքում **քննությունը համարվում է որպես պարտքերի մարման առաջին շրջանի վերահանձնում (ուսանողը չի մասնակցում նպաստների և ուսանողական կրթաթոշակի հատկացման գործընթացներին³):**
- 12.4. Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն ու քննությունն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 58 միավորը չհավաքած (գտնվում է 30-57 միջակայքում) ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու ակադեմիական պարտքերի մարման շրջանում (գրավոր, գրավոր-բանավոր), ընդ որում, այս շրջանում ստացած դրական գնահատականներով **ուսանողը չի կարող մասնակցել նպաստների և ուսանողական կրթաթոշակի հատկացման համար անցկացվող մրցույթին³:**
- 12.5. Յուրաքանչյուր առարկայի քննության կամ ստուգարքի ակադեմիական պարտքը թույլատրվում է վերահանձնել միայն երկու անգամ: Պարտքերի մարման համար սահմանվում է երկու շրջան.
- ձմեռային քննաշրջանի համար՝ **փետրվարի 15-22 -ը ներառյալ և փետրվարի 22-27-ը ներառյալ /1-ին ենթակետը փոփոխված է 02.02.2010թ. գիտական խորհրդի թիվ 1 նիստում/**,

³ Տես «Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման» կանոնակարգը:

- ամառային քննաշրջանի համար՝ **սեպտեմբերի 4-10-ը և սեպտեմբերի 17-24-ը,**
- 12.6.Պրակտիկային մասնակցած, բայց չորակավորված ուսանողների համար դեկանը պրակտիկայի պարտքերի մարման համար հաստատում է երկշաբաթյա ժամանակացույց:
 - 12.7.Ավարտական որակավորման պետական քննության կամ ավարտական աշխատանքի պաշտպանության ժամանակ ստացված գնահատականի վերահանձնում չի թույլատրվում:
 - 12.8.Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ կամ այլ պատճառներով պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

13. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը

- 13.1.Քննաշրջանի արդյունքների ամփոփումը կատարվում է դեկանատներում և ուսումնական վարչությունում:
- 13.2.Այն ուսանողները, որոնք հաջողությամբ կատարել են ուսումնական տարվա պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները, դեկանի ներկայացմամբ և ռեկտորի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս:
- 13.3.Կիսամյակում գերազանցիկ է համարվում այն ուսանողը, որը տվյալ կիսամյակում ստուգարքային և քննական առարկաներից, կուրսային աշխատանքներից (նախագծերից), պրակտիկաներից հավաքել է 86-100 միավորներ (**«գերազանց» գնահատականներ**):
- 13.4.Ուսանողը վճարովի սկզբունքով կարող է նույն կուրսում թողնվել կրկնակի ուսուցման⁴:
- 13.5.Քննաշրջանի արդյունքները ուսումնասիրվում և քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի, ռեկտորատի և ինստիտուտի գիտխորհրդի նիստերում:

14. Կրթական ծրագրի եզրափակիչ ատեստավորումը

- 14.1.Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է բակալավրի ավարտական աշխատանքի (մագիստրատուրայում՝ մագիստրոսական ատենախոսության) կատարումով և պաշտպանությամբ և/կամ ծրագրի ավարտից հետո կազմակերպվող ավարտական (պետական) քննությամբ (քննություններով), որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:
- 14.2.Ավարտական որակավորման պետական քննություններին և ավարտական աշխատանքի (մագիստրոսական ատենախոսության) պաշտպանության թույլատրվում են բակալավրիատի (մագիստրատուրայի) մասնագիտական (մասնագիտացման) հիմնական կրթական ծրագիրն ավարտած և ծրագրին համապատասխան բոլոր առարկաներից անցողիկ միավորներ հավաքած ուսանողները:
- 14.3.Բակալավրի ավարտական աշխատանքի ղեկավար, որպես կանոն, կարող է լինել մասնագիտացնող ամբիոնի պրոֆեսորը, դոցենտը կամ ավագ դասախոսը:
- 14.4.Մագիստրոսական ատենախոսության ղեկավար, որպես կանոն, կարող է լինել մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող ամբիոնի պրոֆեսորը կամ դոցենտը, կամ համապատասխան գիտահետազոտական ինստիտուտի գիտությունների դոկտորի կամ թեկնածուի աստիճան ունեցող աշխատակիցը:
- 14.5.Ավարտական որակավորման պետական քննություն(ներ)ը և ավարտական աշխատանքը (մագիստրոսական ատենախոսությունը) հաջողությամբ հանձնած ուսանողներին ընդունված կարգով տրվում է համապատասխան մասնագիտության (և մասնագիտացման) բակալավրի (մագիստրոսի) դիպլոմ՝ ակադեմիական առաջադիմության մասին տեղեկանքով (դիպլոմի հավելված):
- 14.6.Գերազանցության դիպլոմ շնորհվում է այն ուսանողներին, որոնց բոլոր առարկաներից (մոդուլներից) ստացած միավորները համապատասխանում են **«լավ» (71-85 միավոր) և «գերազանց» (86-100 միավոր) գնահատականներին (եթե «լավ» գնահատականների քանակը չի գերազանցում բոլոր գնահատականների 25 տոկոսը), և որոնք ավարտական աշխատանքի պաշտպանությունից ու պետական որակավորման քննություններից ստացել են 86-100 միավորներ:**
- 14.7.Ավարտական որակավորման պետական քննություն չհանձնած կամ ավարտական աշխատանքը (մագիստրոսական ատենախոսությունը) չպաշտպանած ուսանողն ազատվում է

⁴) Տես «ՀՀ Պետական բուհերի ուսանողներին նույն կուրսում կրկնակի ուսուցման թողնելու, հեռացման (ազատման) և վերականգման կարգի մասին» ՀՀ ԿԳՆ նախարարի 17.08.2001թ. № 337-Մ հրամանը:

ինստիտուտից, նրան տրվում է տեղեկանք՝ բակալավրական (մագիստրոսական) ուսուցման գործընթացն ավարտելու վերաբերյալ, առանց ավարտական դիպլոմի շնորհման:

14.8. Բակալավրի (մագիստրոսի) ավարտական որակավորման քննության վերահանձնումը կամ ավարտական աշխատանքի (մագիստրոսական ատենախոսության) նոր պաշտպանությունը կատարվում է՝ համաձայն ՀՀ ԿԳՆ համապատասխան որոշումների:

15. Կրեդիտների փոխանցումը

15.1. Այլ բուհերից ՎՊՄԻ բակալավրի կամ մագիստրոսի կրթական ծրագիր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

15.2. Այլ բուհերի ուսումնական ծրագրերից ՎՊՄԻ ուսումնական ծրագրեր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե կրթական մոդուլների՝

ա) բովանդակությունները նույնն են,

բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

15.3. Այլ բուհում ՎՊՄԻ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ՎՊՄԻ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

15.4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար ՎՊՄԻ-ին ունի ECTS բուհական համակարգող:

18. Քննությունների և ստուգարքների անցկացման հսկողությունը

18.1. Քննությունների և ստուգարքների անցկացման նկատմամբ հսկողությունն իրականացվում է ամբիոնի վարիչի, դեկանատի, ուսումնական վարչության և քննությունները վերահսկող հանձնաժողովի կողմից:

18.2. Քննությունները վերահսկող հանձնաժողովը ստեղծվում է ռեկտորի հրամանով և հաշվետու է ռեկտորին ու ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորին:

18.3. Քննությունները վերահսկող հանձնաժողովը իրավասու է դեկանի գիտությամբ ստուգելու ֆակուլտետում անցկացվող բոլոր տեսակի քննություններն ու ստուգարքները, նրանց համապատասխանությունը սույն կանոնակարգին և լսելու ուսանող(ներ)ի պատասխան(ներ)ը:

18.4. Քննության կամ ստուգարքի ընթացքի, դասախոսի կամ ուսանողի պարտականությունների կամ իրավունքների որևէ խախտում նկատելու դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են միջամտելու և (դեկանի օգնությամբ) կանխելու նկատված խախտումը:

18.5. Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են, անմիջապես գրավոր տեղյակ պահելով բուհի ղեկավարությանը, դեկանից պահանջելու քննության կամ ստուգարքի դադարեցում: Քննության (ստուգարքի) շարունակման կամ դադարեցման և նոր քննության (ստուգարքի) անցկացման հարցը որոշվում է ինստիտուտի ղեկավարության և դեկանի կողմից:

Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՅԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ «_____»

Ֆակուլտետ _____

Ուսանող _____

անուն հայրանուն, ազգանուն

Ընդունվել է բակալավրիատ «___» _____ 20__թ.

Նախորդող կրթությունը և ավարտական փաստաթղթի համարը _____

տրված «___» _____ 20__թ.

«Շնորհված է բակալավրի որակավորման աստիճան»

Բակալավրիատի _____

մասնագիտությունը

մասնագիտացումը

«___» _____ 20__թ.

«Ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրը ստուգված է»

Ուսումնական խորհրդատու՝ _____

Ֆակուլտետի ղեկան _____

անուն, ազգանուն, գիտ.աստ., կոչում

անուն, ազգանուն, գիտ.աստ., կոչում

ստորագրություն

ստորագրություն

«___» _____ 20__թ.

«___» _____ 20__թ.

Դասընթացի դասիչը և անվանումը	Կրեդիտը / Գնահատականը	Բացթողում / Ավելացում*	Կիսամյակը / Տարեթիվը
------------------------------	-----------------------	------------------------	----------------------

Ա. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս (.....կրեդիտ)

1. Պարտադիր դասընթացներ և կրթական մոդուլներ (.....կրեդիտ)

2. Ընտրովի դասընթացներ (..... կրեդիտ)

Բ. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս (.....կրեդիտ)

1. Պարտադիր դասընթացներ և կրթական մոդուլներ (.....կրեդիտ)

2. Ընտրովի դասընթացներ (..... կրեդիտ)

Գ. Ընդհանուր մասնագիտացման կրթամաս (.....կրեդիտ)

1. Պարտադիր դասընթացներ և կրթական մոդուլներ (.....կրեդիտ)

2. Ընտրովի դասընթացներ (..... կրեդիտ)

Դ. Հատուկ մասնագիտացման կրթամաս (.....կրեդիտ)

1. Պարտադիր դասընթացներ և կրթական մոդուլներ (.....կրեդիտ)

2. Ընտրովի դասընթացներ (.....կրեդիտ)

Ե. Ընդհանուր առողջապահական (.....կրեդիտ)

2. Կրթական այլ բաղադրիչներ (.....կրեդիտ)

ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ՝ 240 կրեդիտ

Ուսանող՝ _____

ստորագրություն

20__թ

Ծանոթություն.* - խնդրվում է դասընթացի Բացթողման/Ավելացման հաստատված ձևաթերթի պատճեն կցել սույն անհատական ծրագրին

Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության համար հատկացվող միավորները ըստ մասնակցության աստիճանի

Մասնակցության աստիճանը %	Հատկացվող միավորը
96-100	20
91-95	19
86-90	18
81-85	17
76-80	16
71-75	15
66-70	14
61-65	13
56-60	12
51-55	11
0-50	0

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հավելված 3

Ձևաթերթ 4.1
Ստուգարքի

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ N__

20 - 20 ուստարվա կիսամյակ

« _____ » մասնագիտության _____ կուրս

Առարկան _____ կրեդիտ _____

Խորհրդատուի ազգանուն, անուն, հայրանուն _____

	Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն	Մասնակցությունը լսարանային պարապմունքների (դասամատյանից)	Ինքնուրույն աշխատանք (Ձև 1՝սյ. 5)	Գործնական, սեմինար, լաբորատոր աշխատանք. (Ձև 2՝ սյ. 4)	Հմտություն (Ձև 2՝սյ. 6)	Տեսական գիտելիքներ (Ձև 3.1՝սյ.14) ստուգարքի	Կարողություններ և հմտություններ (Ձև 3.1, սյ.13)	Դասընթացի հանրագումար. միավորը	Նշում ստուգարքի մասին
1	2	3	4	5	6	7	8	9	10
1		14	10	20	17	0	0	61	Ստուգված
2		15	10	20	4	8	0	57	Թույլատրել ստուգարքի
3		0	10	20	2	12	8	52	Թույլատրել ստուգարքի
...		11	8	0	0	8	0	27	Հստուգված
n		0	10	0	0	9	8	27	Հստուգված

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ -----

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ -----

ՂԱՍԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ N _____

20 - 20 ուստարվա կիսամյակ

« _____ » մասնագիտության _____ կուրս

Առարկան _____ կրեդիտ _____

Խորհրդատուի ազգանուն, անուն, հայրանուն _____

1	Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն	Մասնակցությունը լսարանային պարապմունքներին (դասամատյանից)	Ինքնուրույն աշխատանք (Ձև.1՝ սյ.5)	Գործնական և/կամ սեմինար ու լաբորատոր աշխատանքներ (Ձև.2՝ սյ.4)	Գործնական հմտություններ (Ձև.2՝ սյ.6)	Տեսական գիտելիքներ (Ձև.3.2՝ սյ.15) (քննության)	Կարողություններ և հմտություններ (Ձև.3.2 սյ. 16)	Դասընթացի հանրագումար. միավորը
1	2	3	4	5	6	7	8	9
1		16	10	20	7	12	11	76
2		15	0	20	2	11	10	58
3			0	0	0	0	0	0
...			0	0	0	0	0	0
n			0	0	0	0	0	0

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ _____
 ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ _____

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ N _____

20 - 20 ուստարվա կիսամյակ

« _____ » մասնագիտության _____ կուրս _____

Առարկան -----

կրեդիտ-----

Դասախոսի ազգանուն, անուն, հայրանուն-----

	Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն	Ինքնուրույն աշխատանք				Ինքնուրույն աշխատանքի միջին գնահատականը	Ինքնուրույն աշխատ. միավորը
		I	II	III	IV		
1	2	3				4	5
1		8	12	9	11	10	10
2		16	12	18	20	16.5	10
3		6	8	8	10	8	10
...		20	19	18	17	18.5	10
n		2	3	4	5	3.5	0

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ -----

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ -----

ԴԱՍԱԽՈՍ -----

ԳՈՐԾՆԱԿԱՆ, ՍԵՄԻՆԱՐ, ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ և ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ N _____

20 - 20 ուստարվա կիսամյակ

« _____ » մասնագիտության _____ կուրս

Առարկան _____ կրեդիտ _____

Դասախոսի ազգանուն, անուն, հայրանուն _____

	Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն	Գործնական (սեմին., լաբորատ.) աշխատանքների գնահատ.(մատյանից)	Գործն.(սեմին.,լաբորատ) աշխատանքների միավոր	Ինքնուրույն աշխատանքի միջին գնահատ. (Ձևաթերթ 1;սյ. 4)	Գործնական հմտություններ (սյ.3 >10)-10; եթե սյ.5 >10
1	2	3	4	5	6
1		14	20	10	0
2		17	20	16.5	7
3		7	0	8	0
...		10	20	18.5	0
n		20	20	3.5	0

ՖԱԿՈՒՆԿՆԵՏԻ ԴԵԿԱՆ -----

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ-----

ԴԱՍԱԽՈՍ-----

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հավելված 7
Ձևաթերթ 3.1
Ստուգարքի

ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ N ____
20 - 20 ուստարվա կիսամյակ

« _____ » մասնագիտության _____ կուրս

Առարկան _____ կրեդիտ _____

Դասախոսի ազգանուն, անուն, հայրանուն _____

N	Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն	Ստուգման գրքույկի համարը	I ստուգում		II ստուգում		III ստուգում		IV ստուգում		միջին գնահատ.	Կարողություններ և հմտություններ	Արդյունք	
			ամսաթիվ _____		ամսաթիվ _____		ամսաթիվ _____		ամսաթիվ _____				Միավոր	ստորագր.
			Գնահատ.	ստորագր.	Գնահատ.	ստորագր.	Գնահատ.	ստորագր.	Գնահատ.	ստորագր.				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1			6		8		8		10		8		8	
2			10		12		14		15		12.75		13	
3			11		14		13		13		12.75		13	
...			13		12		15		17		14.25		14	
n			14		6		7		8		8.75		9	

Ուսանողների թիվը ստուգարքի ժամանակ _____

Որոնցից ստացել են «ստուգված» _____

«չստուգված» _____

Ստուգարքին չներկայացած ուսանողների թիվը _____

Ստուգարքին չթույլատրված ուսանողների թիվը _____

ՖԱՎՈՒՆԵՏԻ ԴԵԿԱՆ _____

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ _____

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ N _____
20 - 20 ուստարվա կիսամյակ

Հավելված 8
Ձևաթերթ 3.2
Քննության

« _____ » մասնագիտության _____ կուրս

Առարկան ----- կրեդիտ-----

Դասախոսի ազգանուն, անուն, հայրանուն-----

N	Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն	Ստուգմ. գրքույկի համարը	I ընթացիկ քննություն		II ընթացիկ քննություն		Միջին միավորը	ընթացիկ քննությունների լուծարում		Ընթացիկ քնն. վերջ. գնահատ.	Քննության քննություն	Քննություն				
			ամսաթիվ _____		ամսաթիվ _____			ամսաթիվ _____				ամսաթիվ _____				
			Գնահատ.	ստորագր.	Գնահատ.	ստորագր.		Գնահատ.	ստորագր.			Քնն. տոմսի N	Գնահատ*.	Վերջնակ. գնահատ.	Կարողութ. և հմտություն	ստորագր.
			4	5	6	7		8	9			10	11	12	13	14
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1			8		11		9.5			9.5	ԱՅՈ		12	12		
2			7		17		0	14		15.5	ԱՅՈ		10	15.5		
3			12		6		0	15		13.5	ՈԶ			13.5		
...			14		7		0	15		14.5	ԱՅՈ		12	14.5		
n			5		13		0	14		13.5	ՈԶ			13.5		
			4		5		0	11		11	ՈԶ			11		
			4		6		0	7		0	ՈԶ			0		

Ուսանողների թիվը քննության ժամանակ _____

Որոնցից ստացել են «զերազանց» _____

«լավ» _____

«բավարար» _____

«անբավարար» _____

Քննության չներկայացած ուսանողների թիվը _____

Քննության չթույլատրված ուսանողների թիվը _____

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵՎԱՆ _____

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ _____

Գնահատականը ըստ 5 բալանոց համակարգի	Գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի	Գնահատականը ըստ ECTS համակարգի
«գերազանց» (5)	96-100	A ⁺
«գերազանց» (5)	91-95	A
«գերազանց» (5)	86-90	A ⁻
«լավ» (4)	81-85	B ⁺
«լավ» (4)	76-80	B
«լավ» (4)	71-75	B ⁻
«բավարար» (3)	67-70	C ⁺
«բավարար» (3)	62-66	C
«բավարար» (3)	58-61	C ⁻
«անբավարար»(թերի)(2) ¹	31-57	D
«անբավարար» (2) ²	մինչև 30	F
«ստուգված»	58-100	S
«չստուգված» ¹	31-57	U
«չստուգված» ²	մինչև 30	U ⁻

¹) Թույլատրվում է մասնակցել պարտքերի մարմանը

²) Չի թույլատրվում մասնակցել պարտքերի մարմանը

Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Անձնական համար		Անուն, հայրանուն, ազգանուն		Մասնագիտություն	
Աշնանային կիսամյակ 20 թ.					
Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ	
Ծրագրային կրեդիտներ		Գնահատման կրեդիտներ		Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ
Ընդհանրացված արդյունքները 20 թ. Աշնանային կիսամյակից հետո					
Լրացված ծրագրային կրեդիտներ		Լրացված գնահատման կրեդիտներ		Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ

Գարնանային կիսամյակ 20 թ.					
Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ	
Ծրագրային կրեդիտներ		Գնահատման կրեդիտներ		Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ
Ընդհանրացված արդյունքները 20 թ. գարնանային կիսամյակից հետո					
Լրացված ծրագրային կրեդիտներ ¹		Լրացված գնահատման կրեդիտներ		Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ ²

¹) Ծրագրային կրեդիտների ամենափոքր թիվը՝ 27:

²) Բավարար առաջադիմության համար անհրաժեշտ է ՄՈԳ-ի 2,7 և բարձր արժեք: